

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

Ռազմիկ Նիկողոսի Դավոյանը հայ բանաստեղծ է և հասարակական գործիչ: Ծնվել է 1940 թ. հուլիսի 3-ին Հայկական ԽՍՀ Համամլուի շրջանի՝ ներկայիս Լոռու մարզի Սպիտակ համայնքի Մեծ Պարնի գյուղում:

Տարրական կրթությունը ստացել է Մեծ Պարնի գյուղում: 1949 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է Լենինական (Գյումրի), ուր ավարտել է միջնակարգ դպրոցը: 1958 թվականին ավարտել է Լենինականի բժշկական ուսումնարանը՝ բուժակի մասնագիտությամբ: 1959-1964 թվականներին սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետում:

1958-1959 թվականներին աշխատել է Լենինականում: Ուսմանը զուգընթաց աշխատել է «Գիտություն և տեխնիկա» ամսագրի հիմնադիր խմբագրությունում՝ որպես մարդաբանության և բժշկության բաժնի վարիչ, «Գրական թերթի» խմբագրությունում՝ որպես սրբագրիչ: 1965 թվականից վարել է «Գրական թերթի» պոեզիայի և արձակի բաժինը: 1970 թվականից աշխատել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի մամուլի բաժնում: 1989 թվականին եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, Աղետի գոտու և բռնագաղթվածների հարցերի հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ: 1991 թվականից՝ Հայաստանի «Համազգային մշակութային միության» վարչության նախագահ, 1994-1996

թվականներին՝ Հայաստանի Գրողների Միության վարչության նախագահ, 1999-2003 թվականներին՝ Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական: 2000 թվականից՝ - Միջազգային ինֆորմատիզացիայի ակադեմիայի ակադեմիկոս, 2005-2007 թթ.՝ «Երևան» վավերագրական ֆիլմերի ստուդիայի տնօրեն: 2007-2018 թթ.՝ «Հ1» հեռուստաալիքի տնօրենի խորհրդական:

«Իմ աշխարհը» (1963) և «Ստվերների միջով» (1967) գրքերում որոշակիորեն դրսևորվել են բանաստեղծի նախասիրությունները: 1969-ին՝ հինգ տարի արգելափակվելուց հետո, հրատարակվել է «Ռեքվիեմ» պոեմը: «Խաչերի ջարդը» (1972), «Մեղրահաց» (1973), «Կեղևդ բաց արա» (1975), «Տաք սալեր» (1978), «Էպոս պատանության» (1984), «Ընտրանի» (2011), «Շշուկի նման» (2025) գրքերում Դավոյանի բանաստեղծական աշխարհը լայնորեն բաց է արդիական կենսական ազդակների առջև: «Պղնձե վարդ» (1983) գրքում մշտապես ներկա է պատմական հիշողությունը: Դավոյանը նաև մանկական բանաստեղծությունների («Տխուր փիղը» (1978)), կինովիպակի և ուղեգրությունների («Հանճար և հիշողություն» (1986)), վեպերի («Եթե Աստված կամենա» (2005), «Գերդաստան» (2017)) հեղինակ է: 2023 թվականին լույս է տեսել Դավոյանի «Ռեքվիեմ» պոեմի՝ երկու մասերից բաղկացած վերջնական, ամբողջական տարբերակը:

1990թ. չեխական հեղինակավոր «Օդեոն» հրատարակչությունը նրա ստեղծագործությունները ներառել է համաշխարհային գրականության անթոլոգիայում:

Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (2010), Հայ Առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» մեդալով (2011) և այլ պարգևներով: 2017 թվականին նրան շնորհվել է Երևանի պատվավոր քաղաքացու կոչում:

Մահացել է 2022 թ.-ի հունվարի 11-ին Երևանում: